ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2

«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2017 թ. դեկտեմբերի 1-ին, ժամը 11:00 տեղի ունեցած նիստի

ք. Երևան

Նիստին ներկա էին «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի (այսուհետ՝ ՀԳՊԱ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 24 անդամներից 20-ը:

Նիստը նախագահում էր Խորհրդի նախագահ, Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Սամվել Կճոյանը, իսկ քարտուղարում՝ Խորհրդի քարտուղար Մկրտիչ Այվազյանը:

Բացելով Խորհրդի երկրորդ նիստը, Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Սամվել Կճոյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի ռեկտորի ընտրություն.

ա) Հավակնորդի՝ ՀԳՊԱ ռեկտորի ընտրության կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության որոշում:

բ) Հավակնորդի ծրագրի ներկայացում:

գ) Հարցերի ներկայացում հավակնորդին, ելույթներ:

դ) Հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:

ե) Ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն:

զ) Ռեկտորի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

Խորհրդի անդամների կողմից օրակարգային այլ հարց չառաջարկվեց, և օրակարգը դրվեց քվեարկության. կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի ռեկտորի ընտրություն:

ա) Խորհրդի քարտուղար Մ. Այվազյանը զեկուցեց, որ ՀԳՊԱ ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար 2017 թվականի նոյեմբերի 17-ին հայտ է ներկայացրել ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆ. Արամ Իսաբեկյանը: Խորհրդի քարտուղարի հաղորդմամբ՝ հավակնորդի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՀԳՊԱ ռեկտորի ընտրության կանոնակարգի պահանջներին: Քանի որ հավակնորդի փաստաթղթերի պատճենները նախապես առաքվել էին Խորհրդի անդամներին, և նրանք ծանոթացել էին դրանց, ուստի փաստաթղթերի առնչությամբ հարցեր չհնչեցին:

Հարցը դրվեց քվեարկության. կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց. Հաստատել, որ հավակնորդը համապատասխանում է ՀԳՊԱ ռեկտորի ընտրության կանոնակարգով նախատեսված պահանջներին:

բ) Խորհրդի նախագահ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը խոսքը փոխանցեց ՀԳՊԱ ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդ Ա. Իսաբեկյանին: Ա. Իսաբեկյանը ներկայացրեց իր նախընտրական ծրագրի առանցքային դրույթները՝ հատուկ շեշտադրելով.

1. Կառավարման համակարգի կատարելագործումը
2. Արդի և մրցունակ կրթական ծրագրերի իրականացումը
3. Հետազոտությունների իրականացումը և դասավանդման հետ դրանց փոխկապակցումը
4. Արտաքին կապերի ընդլայնումը և շարժունության խթանումը
5. Հասարակությանը մատուցվող ծառայությունների զարգացումը
6. Որակի ապահովման համակարգի կատարելագործումը և որակի մշակույթի ձևավորումը:

գ) Խորհրդի նախագահ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը առաջարկեց գրանցվել հավակնորդին հարցեր տալու համար: Հարցեր տալու համար գրանցվելու ցանկություն հայտնողներ չեղան և հավակնորդին հարցեր չներկայացվեցին:

Ելույթ ունեցան խորհրդի անդամներ Գ. Հարությունյանը, Վ. Մկրտչյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Ծատուրյանը և Փ. Միրզոյանը դրական արտահայտվելով Ա. Իսաբեկյանի և նրա նախընտրական ծրագրի մասին:

դ) Խորհրդի նախագահ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը ներկայացրեց քվեարկության ընթացակարգը և առաջարկեց քվեարկությունը կազմակերպելու համար ձևավորել հաշվիչ հանձնաժողով: Խորհրդի անդամների կողմից առաջարկվեցին հետևյալ թեկնածությունները.

1. Գրիգոր Գրիգորյան (կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)
2. Ռոբերտ Սուքիասյան (կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)
3. Մկրտիչ Այվազյան (կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)
4. Ավետիք Ավետիսյան (կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)
5. Սոնա Պողոսյան (կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ե) Հաշվիչ հանձնաժողովը իր կազմից հանձնաժողովի նախագահ ընտրեց Ա. Ավետիսյանին իսկ քարտուղար ընտրեց Ս. Պողոսյանին: Հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամները ստորագրեցին բոլոր քվեաթերթիկների վրա և կազմակերպեցին փակ (գաղտնի) քվեարկություն: Քվեարկության ավարտից հետո կազմվեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրություն, և հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Ավետիսյանը Խորհրդի անդամներին հրապարակեց քվեարկության արդյունքները. կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

զ) Խորհրդի նախագահ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Սամվել Կճոյանը առաջարկեց հաստատել փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները. կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց. Ղեկավարվելով «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 2-րդ ենթակետով և 57-րդ կետով, ՀԳՊԱ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 2-րդ ենթակետով և ՀԳՊԱ ռեկտորի ընտրության կանոնակարգով, հիմք ընդունելով փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները (կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի տնօրեն (ռեկտոր) ընտրել Արամ Էդուարդի Իսաբեկյանին:

Խորհրդի նախագահ՝ _____ Ս. Կճոյան

Խորհրդի քարտուղար՝ _____ Մ. Այվազյան